# Արձանագրություն N 3

**«ՀԱՊՀ-ԿՄ-ԳՀԾՁԲ-19/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի**
*/համացանցային ծառայություն/*

ք. Կապան «26» մարտ 2019թ.

Մասնակցում էին՝
հանձնաժողովի նախագահ՝ Արթուր Կոստանդյան
անդամներ՝ Իվան Խաչատրյան
Արուս Ավետիսյան
Գրիգորի Սահակյան
Ալբո Զաքարյան
քարտուղար՝ Ժաննա Մդոյան

**<u>ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման մասին</u>**

1. Ընդունել ի գիտություն.
Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04. 05. 2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի պահանջները ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացվել ընտրված մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև իրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:
ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի **«ՋիԷՆՍԻ-Ալֆա»ՓԲԸ-ն** ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0 :**

2. **<u>Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին</u>**

Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց հաստատել **«ՀԱՊՀ-ԿՄ-ԳՀԾՁԲ-19/1»** ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքները.

| Մասնակցի անվանումը | Հայտի գնահատականը |
|---|---|
| **«ՋիԷՆՍԻ-Ալֆա»ՓԲԸ** | Բավարար |

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0 :**

<u>3. «ՀԱՊՀ-ԿՄ-ԳՀԾՁԲ-19/1» **ծածկագրով գնումների կատարման նպատակով հայտարարված ընթացակարգի ընտրված մասնակցի մասին**</u>

Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը և «Գնումների մասին»ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ կետը՝ **«ՀԱՊՀ-ԿՄ-ԳՀԾՁԲ-19/1»** ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից է հայտարարվում **«ՋիԷՆՍԻ-Ալֆա»ՓԲԸ:**

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0 :**

## 4. Գնման պայմանագիր կնքելու որոշման մասին

4.1.Հիմք ընդունելով սույն արձանագրության 3-րդ կետով ընդունված որոշումը և «Գնումների մասին»ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ կետը **«ՋԻԵՆՍԻ-Ալֆա» ՓԲԸ-ին** ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ՝ 1399 200 **ՀՀ դրամի (ներառյալ ԱԱՀ):**

4.2. Հիմք ընդունելով «Գնումների մասին»ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետը, անգործության ժամկետ չսահմանել:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0 :**

## 5 Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

5.1. Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքելուն օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 12:00-ին, ՀՀ Սյունիքի մարզ ք. Կապան, Բաղաբերդի 28, «ՀԱՊՀ» Կապանի մ/ճ, հաշվապահություն հասցեում:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0 :**

Հանձնաժողովի

Նախագահ՝ ___________________ Արթուր Կոստանդյան

Անդամներ՝ ___________________ Իվան Խաչատրյան

___________________ Արուս Ավետիսյան

Գրիգորի Սահակյան

___________________ Ալբո Զաքարյան

Քարտուղար՝ ___________________ Ժաննա Մղոյան